


3153

Պըոլեատարներ բոլոր յերկըների, միացնե



Ա. Տիգան

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ



3K33
2-35

21 JUN 2005

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՍՇ ԽԵՎՇՆԵՐԻ, ՄԻԱՑԵՐ

Կ. ԱՅԱԼԻՆ

20 NOV 2009

ՀԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

ՀԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՌԿԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՑԵՎ. ԱՌԱՋՆՈՐԴ.

Հոդված Լենինի ծննդյան 50-ամյակի առքիվ

Հ Ե Ն Ի Ն Ի Մ Ա Ս Ի Ն

Ճառ՝ արտասահմած կրեմլյան կուրսաների յերեկույրում
1924 թ. հունվարի 28-ին

ԼԵՆԻՆՐ ՎՈՐՓԵՍ ՌԿԿ-Ի ԿԸՀՄՍԿԵՐԳԻՉ ՅԵՎ
ԸԹԱԶՆՈՐԻ

Հոդված Լենինի ծննդյան 50-ամյակի առիրի («Պրավդա» № 86,
1920 թ. տպիլ)

Մարքսիստական յերկու խումբ գոյություն ունի: Նրանք յերկումն ել աշխատում են մարքսիզմի դրոշի տակ, իրենց «բուն» մարքսիստական են համարում: Բայց այնուամենայնիվ նրանք ամենենքին նույնը չեն: Ավելին, նրանց միջև մի ամբողջ անգունդ կա, վորովինետև նրանց աշխատանքի մեթոդները տրամադրեն հակադիր են:

Առաջին խումբը սովորաբար սահմանափակվում ե մարքսիզմն արտաքուստ ընդունելով, նրա հանդիսավոր հոչակումով: Զկարողանալով, կամ չկամ ենալով թափանցել մարքսիզմի եյության մեջ, չկարողանալով, կամ չկամ ենալով կենսագործել այն, նա մարքսիզմի կենդանի ու հեղափոխական դրույթները վեր ե ածում մեռած, վոչինչ չասող ֆորմուկաների: Իր գործունեյությունը նա հիմնավորում է վոչ թե փորձով, վոչ թե գործնական աշխատանքի հաշվառումով, այլ Մարքսից բերած ցիտատներով: Նա ցուցումներ և դիրեկտիվներ ե քաղում վոչ թե կենդանի իրականության վերլուծությունից, այլ անալոգիաներից և պատմական պարալեներից: Խոսքի և գործի անջատում—սա յե այս խմբի հիմնական հիմքները: Այստեղից հիսաթափություններ և մշտական դժգոհություն բախտից,



4788
39

Խմբագրեց Սիմոն
Մերսերի: Ա. Տ.-Մկրտչյան
Հանձնվում է առաջարկության 20 դեկտեմբերի 1933 թ.
Խստացված և սպազմակ 15 հունվարի 1934 թ.
Գլուխիք 7798(թ). Համա. № 160.
Պատճեն՝ № 93. Տիրամ 5000. 60.000 առ. 60.

Կուտայած սպազմ. Ձերեւուան.

վորը շարունակ և ամենուրեք խարում ե նրան «Քիթը կախ» թողնում։ Այդ խմբի անունն ե մենշկիզմ (Ռուսաստանում), ոպորտունիզմ (Յեփոպայում)։ Ընկ. Տիշկոն (Յոգիխես) Լոնդոնի համագումարում բավական սուր բնորոշեց այդ խմբին, ասելով, թե նա վոչ թե կանգնած ե, այլ պառկած ե մարքսիզմի տեսակետի վրա։

Յերկրորդ խումբն, ընդհակառակը, հարցի ծանրության կենտրոնը մարքսիզմն արտաքուստ ընդունելուց վոխադրում ե նրա կիրառման, նրա կենսագործման վրա։ Նշել մարքսիզմի իրագործման այնպիսի ուղիներ ու միջոցներ, վորոնք համապատասխանեն իրադրությանը, վոխել այդ ուղիներն ու միջոցները, յերբ իրադրությունը վոխվում ե, ահա թե զիսավորապես ինչի վրա յե դարձնում իր ուշադրությունն այդ խումբը։ Դիրեկտիվներ և ցուցումներ այդ խումբը քաղում ե վոչ թե պատմական անալոգիաներից՝ ու պարալելներից, այլ շրջապատող պայմանների ուսումնասիրությունից։ Իր գործունեյության ընթացքում նա հենվում է վոչ թե ցիտատների և ասացվածքների վրա, այլ գործնական փորձի վրա, իր յուրաքանչյուր քայլն ստուգելով փորձով, սովորելով իր սիմաների վրա և ուրիշներին սովորեցնելով նոր կյանքի կառուցումը։ Հենց դրանով ել հատկապես բացատրվում ե այս, վոր այս խմբի գործունեյության մեջ խոսքը չի անջատվում գործից, և Մարքսի ուսմունքն ամբողջապես պահում ե իր կենդանի հեղափոխական ուժը։ Այս խմբի համար միանգամայն տեղին են Մարքսի այս խոսքերը, վորոնց համաձայն մարքսիստները չեն կարող կանգ առնել աշխարհը բացատրե-

լով, այլ պետք ե առաջ գնան այն հաշվով, վոր փոխեն այդ աշխարհը։ Այդ խմբի անունն ե բոլշևիզմ, կոմունիզմ։

Այդ խմբի կազմակերպիչն ու առաջնորդը Վ. Ի. Լենինն ե։

1. ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ

Պրոլետարական կուսակցության կազմեն Ռուսաստանում ընթացել ե հատուկ պայմաններում, վորոնք տարբեր են այն պայմաններից, վոր կային Արևմուտքում բանվորական կուսակցությունների կազմակերպման միջոցին։ Մինչդեռ Արևմուտքում, Ֆրանսիայում, Գերմանիայում, բանվորական կուսակցությունը դուրս ե յեկել արհեստական միություններից՝ միությունների և կուսակցությունների լեզալ գոյության պայմաններում, բուրժուական հեղափոխությունից հետո ստեղծված իրադրության մեջ, յերբ բուրժուական պարլամենտ կար, յերբ իշխանության գլուխն անցած բուրժուազիան դեմ առ դեմ կանգնած եր պրոլետարիատին, — Ռուսաստանում, ընդհակառակը, պրոլետարական կուսակցության կազմվելը տեղի յեր ունենում ամենաանողոք բացարձակ միապետության որով, բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սպասման մթնոլորտում, յերբ մեկ կողմից՝ կուսակցական կազմակերպությունները լեցվում եյին բանվոր դասակարգին բուրժուական հեղափոխության համար ոգտագործելու ծարավի բուրժուական «լեզալ-մարքսիստական» տարրերով, մյուս կողմից՝ լավագույն կուսակ-

ցական աշխատողներին ցարական ժանդարմերիան դուրս եր կորզում կուսակցության շարքերից, մինչդեռ տարերային հեղափոխական շարժման աճումը պահանջում եր հեղափոխականների կայուն, միաձույլ և բավականաչափ կոնսպիրատիվ մարտական կորիգ, վորը կարողանար այդ շարժումը տանել բացարձակ միապետությունը տապալելու համար:

Խնդիրն այն եր, վոր հարկավոր եր վոչխարներին ջոկել այծերից, սահմանագատվել խորթ տարերից, տեղերում կազմակերպել փորձված հեղափոխականների կազրեր, հստակ ծրագիր և ամուր տակտիկա տալ նրանց, վերջապես, այդ կազրերին համախմբել պրոֆեսիոնալ հեղափոխականների մեկ մարտական կազմակերպության մեջ, վորը բավականաչափ կոնսպիրատիվ լիներ ժանդարմական հարձակումներին դիմանալու համար, բայց դրա հետ մեկտեղ՝ բավականաչափ կապված մասսայի հետ, հարկ յեղած դեպքում պայքարի տանելու համար նրանց:

Մենշևիկները, հենց նրանք, վոր «պառկած են» մարքսիզմի տեսակետի վրա, հարցը լուծում եյին պարզ ձևով. քանի վոր Արևմուտքում բանվորական կուսակցությունը դուրս ե յեկել բանվոր դասակարգի տնտեսական դրության բարելավման համար պայքարող անկուսակցական արհետակցական միություններից, ապա Ռուսաստանում պետք ե, հնարավորության չափով, անել նույն բանը, այսինքն՝ առայժմ բավականանալ տեղերում քրանվորների տնտեսական պայքարով ընդդեմ տերերի և կառավարության», առանց համառուսական մարտական կազմակերպություն ստեղծելու, իսկ հետո... հետո,

յեթե մինչ այդ արհետակցական միություններ հանդես չգան, անկուսակցական բանվորական համագումար հրավիրել և կուսակցություն հայտաբարել այն:

Այն մասին, վոր մենշևիկների՝ ոռուսական պայմանների համար ուտոպիական այս «մարքսիստական» «պլանը», այնուամենայնիվ, լայնագիտացիոն աշխատանք ե յենթադրում, վոր նպատակ ունի նսեմացնել կուսակցականության իդեան, վոչնչացնել կուսակցական կազրերը, պրոլետարիատին թողնել առանց իր կուսակցության և բանվոր դասակարգին վրերաների ճանկը նետել—այդ մասին հազիվ թե զիսի եյին ընկնում այն ժամանակ մենշևիկները, թերևս նաև բոլշևիկներից շատերը:

Լենինի մեծագույն ծառայությունը ոռուսական պրոլետարիատի և նրա կուսակցության առջև այն է, վոր նա բաց արագ մենշևիկյան կազմակերպչական «պլանի» ամբողջ վտանգը դեռևս այն ժամանակ, յերբ «պլանը» հազիվ-հազ սաղմնավորված եր, յերբ իրենք՝ «պլանի» հեղինակները դժվարությամբ եյին պարզ պատկերացնում նրա ուրվագիծը, և բաց անելով այդ, կատաղի գրոհ սկսեց մենշևիկների կազմակերպչական սանձարձակության դեմ, պրակտիկների վողջ ուշադրությունը կենտրոնացնելով այդ հարցի վրա: Վորովինետև խոսքը կուսակցության գոյության մասին եր, կուսակցության մահվան և կյանքի մասին եր:

Հրատարակել համառուսական քաղաքական մի լրագիր, իրրե կուսակցական ուժերի ձգման կենտրոն, տեղերում կայուն կուսակցական կազրեր կազմակերպել իրրե կուսակցության «կանոնավոր գո-

րամասեր», լրագի միջոցով ի մի հավաքել այդ կաղըերին և նրանց համախմբել իրրեցայտուն գծված սահմաններ, հստակ ծրագիր, ամուր տակտիկա և միասնական կամք ունեցող համառուսական մարտական մի կուսակցություն,—ահա թե ինչպիսի պլան եր զարգացնում էենինն իր «Ի՞նչ անել» և «Մեկ քայլ առաջ, յերկու քայլ հետ» նշանափոք զբքույիներում։ Այս պլանի արժանիքն այն եր, վոր նա ամբողջապես համապատասխանում եր ոռւսական իրականությանը և վարպետորեն ընդհանրացնում եր լավագույն պլակտիկների կազմակերպչական փորձը։ Այս պլանի համար մղած պայքարում ոռւսական պլակտիկների մեծ մասը վճռականորեն գնաց էենինի հետեւյց, կանգ չառնելով պառակտման առջև։ Այս պլանի հաղթանակը հիմք դրեց այն միաձույլ և կոփած կոմունիստական կուսակցության, վորին հավասարը չկա աշխարհում։

Հաճախ մեր ընկերները (և վոչ միայն մենշեվիկները) էենինին մեղադրում եյին բանավեճի և պառակտման չափազանց մեծ հակում ունենալու, հաշտվողականների դեմ անհաշտ պայքարելու և այլ խընդիրներում։ Անկասկած թե մեկը և թե մյուսը տեղի յեն ունեցել իր ժամանակին։ Բայց դժվար չե հասկանալ, վոր մեր կուսակցությունը չեր կարողանա ազատվել ներքին թուլությունից և անորոշությունից, նա չեր կարողանա իրեն յուրահատուկ ուժին ու ամրությանը հասնել, յեթե նա չփոքարեր իր միջ վոչ-պրոլետարական, ոպորտունիստական տարրերին։ Բուրժուական տիրապետության դարաշրջանում պրոլետարական կուսակցությունը կարող է աճել և ամրանալ միայն այն չափով, ինչ չափով

նա պայքարում է ոպորտունիստական, հակահեղափոխական և հակակոմունիստական տարրերի դեմ իր ներսում և բանվոր դասակարգի մեջ։ Լասարին իրավացի յեր, յերբ ասում եր, թե «կուսակցությունն ամրանում է այն բանով, վոր մաքրում է իրեն»։ Մեղադրողները սովորաբար մատնանշում եյին գերմանական կուսակցությունը, վորտեղ այն ժամանակ ծաղկում էր «միասնությունը»։ Բայց, առաջին, ամեն միասնություն ուժի նշան չե, յերկրորդ բավական է մի հայացք գցել յերեք կուսակցությունների պառակտված այդ նախկին գերմանական կուսակցության վրա, հասկանալու համար Շեյդեմանի և Նոսկեյի, նրանց հետ նաև էիրկնեխտի և Լյուքսեմբուրգի «միասնության» ամբողջ կեղծիքն ու յերեսակայական լինելը։ Յեկ ինչ իմանաս, ավելի լավ չեր լինի արդյոք գերմանական պրոլետարիատի համար, յեթե գերմանական կուսակցության հեղափոխական տարրերն իր ժամանակին անջատվեյին նրա հականեղափոխական տարրերից... Վհչ, էենինը հազար անգամ իրավացի յեր՝ կուսակցությունը տանելով հակակուսակցական և հակահեղափոխական տարրերի դեմ անհաշտ պայքարելու ուղիով։ Վորովինետև միայն այդպիսի կազմակերպչական քաղաքականության հետևանքով մեր կուսակցությունը կարող եր ստեղծել այն ներքին միասնությունն ու զարմանալի միաձուլությունն իր մեջ, վորպիսին ունենալով նա անհիմանդագին կերպով դուրս յեկավ հուկիսյան ճգնաժամից կերենսկու որով, իր ուսերի վրա տարավ չոկտեմբերյան ապստամբությունը, առանց ցնցումների անցկացրեց բրեստյան շրջանի ճղնաժամը, հաղթանակ կազմակերպեց Անդա-

տայի դեմ և վերջապես ձեռք բերեց այն չտեսնված ճկունությունը, վորի շնորհիվ նա ի վիճակի յե ու զած միջոցին վերակազմել իր շարքերը և իր հարյուր-հազարավոր անդամներին կենտրոնացնել ամեն մի մեծ աշխատանքի շուրջը, առանց իր ներսում շփոթություն առաջացնելու:

2. ԱԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ

Բայց Ռուսական կոմունիստական կուսակցության կազմակերպչական արժանիքները խնդրի միայն մեկ կողմն են: Կուսակցությունը չեր կարողանա այդքան արագ աճել և ամրանալ, յեթե նրա աշխատանքի քաղաքական բովանդակությունը, նրա ծրագրը և տակտիկան չհամապատասխանելին ուռւսական իրականությանը, յեթե նրա լոգունգները չհրահելին բանվորական մասսաներին և առաջ չմղելին հեղափոխական շարժումը: Այժմ անցնենք խնդրի այդ կողմին:

Ռուսական բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը (1905 թ.) ընթացավ այնպիսի պայմաններում, վորոնք տարբեր եին Արևմուտքի պայմաններից—հեղափոխական հեղաշրջումների ժամանակ, որինակի համար՝ ֆրանսիայում և Գերմանիայում: Մինչդեռ հեղափոխությունը Արևմուտքում տեղի ունեցավ մանուֆակտուրային շրջանի և անդարդացած դասակարգային պայքարի պայմաններում, յերբ պրոլետարիատը թույլ եր ու սեփական կուսակցությունը, վորը կարողանար: Ճեակերպել նրա պահանջները, իսկ բուրժուագիան բավականաչափ հեղափոխական եր բանվոր-

ներին ու գյուղացիներին իր նկատմամբ վստահություն ներշնչելու և արիստոկրատիայի դեմ պայքարի տանելու համար նրանց, — Ռուսաստանում, ընդհակառակը, հեղափոխությունն սկսվեց (1905 թ.) մեքենային շրջանի և զարգացած դասակարգային պայքարի պայմաններում, յերբ համեմատաբար բազմամարդ և կապիտալիզմի միջոցով համախմբված ռուսական պրոլետարիատն արգեն մի շարք մարտեր եր ունեցել բուրժուագիայի դեմ, իր կուսակցությունն ուներ, վորն ավելի համախմբված եր, քան բուրժուականը, իր դասակարգային պահանջներն ուներ, իսկ ռուսական բուրժուագիան, վոր այդ ժամանակ ապրում եր կառավարությունից վերցրած պատվերներով, բավականաչափ ահաբեկված եր պրոլետարիատի հեղափոխականությամբ, վորպեսզի կարողանար ձգտել դաշնաք կապելու կառավարության և կալվածատերերի հետ—ընդդեմ բանվորների և գյուղացիների: Այն փաստը, վոր ռուսական հեղափոխությունը բռնկվեց Մանջուրիայի գաշտերում ձեռք բերած ռազմական անհաջողությունների հետևանքով,—այդ փաստը միայն արագացրեց դեպքերը, վոչինչ չփոխելով վործի եյթյան մեջ:

Հանգամանքները պահանջում եյին, վոր պրոլետարիատը կանգներ հեղափոխության պուլսը, իր շուրջը համախմբեր հեղափոխական գյուղացիությանը և վճռական պայքար մղեր միաժամանակ թե ցարցիկմի և թե բուրժուագիայի դեմ, յերկրի լիակատար գեմոկրատականացման և իր դասակարգային շահերի ապահովման համար:

Բայց մենշևիկները, հենց նրանք, վոր «պառկած

են» մարքսիզմի տեսակետի վրա, հարցը լուծեցին յուրատեսակ ձևով. քանի վոր ոռուսական հեղափոխությունը բուրժուական է, իսկ բուրժուական հեղափոխությունները դեկավարում են բուրժուազիայի ներկայացուցիչները (տես ֆրանսական և գերմանական հեղափոխությունների պատմությունը), ուստի պրոլետարիատը չի կարող ոռուսական հեղափոխության հեգեմոնը լինել. դեկավարությունը պետք է հանձնվի ոռուսական բուրժուազիային (հենց նրան, վոր դավաճանում է հեղափոխությանը), գյուղացիությունը նույնպես պետք է դրվի բուրժուազիայի խնամքի տակ, իսկ պրոլետարիատը պետք է մնա ծայրահեղ ձախ ոպոզիցիայի դիրքում։ Յեվ վատթար լիբերալների այս գուեհիկ կրկներգությունները մենշևիկները ներկայացնում եյին իրրև «բուն» մարքսիզմի վերջին խոսքը...»

Լենինի մեծագույն ծառայությունը ոռուսական հեղափոխությանն այն է, վոր նա մինչև արմատները բաց արագ մենշևիկների պատմական պարագաների դատարկությունը և բանվորական գործը բուրժուազիայի կեր զարձնելու մենշևիկյան «հեղափոխության սխեմայի» ամբողջ վտանգը։ Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա բուրժուազիայի դիկտատուրայի փոխարեն, բոյկոտ բուլիգինյան՝ Դումային և գինված ապստամբություն՝ Դումային մասնակցելու և այնտեղ գործնական աշխատանք կատարելու փոխարեն, «Ճախ բլոկ» իդեա, յերբ Դուման համենայն դեպս կայացել եր, և Դումայի ամբոխ ոգտագործում Դումայից դուրս պայքարելու համար՝ կաղետական մինիստրության և Դումայի ու-

ակցիոն «պահպանման» փոխարեն, պայքար կազետական կուսակցության դեմ՝ իրեւ հեղափոխական ուժի, նրա հետ բլոկ կազմելու փոխարեն, — ահա թե ինչպիսի տակտիկական ծրագիր եր գարգացնում էնսինն իր «Յերկու տակտիկա», «Կաղետների հաղթանակը» նշանավոր բրոյալիներում։

Այս պլանի արժանիքն այն եր, վոր նա, ուղղակի ու վճռականորեն ձևակերպելով պրոլետարիատի դասակարգային պահանջները բուրժուա-դեմոկրատական հեղափոխությանն անցնելը, սաղմային վիճակում իր մեջ կրում եր պրոլետարիատի դիկտատուրայի իդեան։ Այս տակտիկական պլանի համար մղած պայքարում ոռուսական պրակտիկների մեծ մասը գնաց Լենինի հետեւյց վճռականորեն ու անվերադարձ։ Այս պլանի հաղթանակը հիմք դրեց այն հեղափոխական տակտիկային, վորի շնորհիվ այսոր մեր կուսակցությունը ցնցում է համաշխարհային իմպերիալիզմի հիմքերը։

Դեպքերի հետագա զարգացումը, չորսամյա իմպերիալիստական պատերազմը և ամբողջ ժողովրդական տնտեսության ցնցումը, Փետրվարյան հեղափոխությունը և նշանավոր յերկիշխանությունը, Ժամանակավոր կառավարությունը՝ վորպես բուրժուական հեղափոխության ոջախ, և Պետերբուրգի խորհուրդը՝ վորպես սաղմանավորվող պրոլետարական դիկտատուրայի ձեւ, Հոկտեմբերյան հեղաշրջումը և Հիմնադիր ժողովի ցրումը, բուրժուական պարլամենտարիզմի վերացումը և Խորհուրդների հանրապետության հոչակումը, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելը և

համաշխարհային իմպերիալիզմի յելույթը, խոսքով «մարդսիստների» հետ միասին՝ ընդդեմ պրոլետարական հեղափոխության, վերջապես՝ Հիմնադիր ժողովին կառչած, պրոլետարիատի միջոցով նավից դուրս շարտված և հեղափոխական ավիքով կապիտալիզմի ափը նետված մենշևիկների վողորմելի դրությունը, —այս բոլորը հաստատեցին միայն Լենինի «Յերկու տակտիկա»-յում ձևակերպած հեղափոխական տակտիկայի հիմունքների ճշտությունը։ Իր ձեռքում այդպիսի ժառանգություն ունեցող կուսակցությունը կարող եր խիզախորեն առաջ լողալ, չվախենալով ընդջրյա խութերից։

Պրոլետարական հեղափոխության մեր ժամանակներում, յերբ կուսակցության յուրաքանչուր լոգունդ և առաջնորդի յուրաքանչյուր նախադասություն ստուգվում ե գործով, պրոլետարիատն իր առաջնորդներին հատուկ պահանջներ ե առաջադրում։ Պատմությունը ճանաչում ե պրոլետարական առաջնորդներ, փոթորկահույզ ժամանակների առաջնորդներ, պրակտիկ առաջնորդներ, անձնազոհ և խիզախ, բայց թեորիայում թույլ։ Մասսաները շուտ չեն մոռանում այդպիսի առաջնորդների անունները։ Բայց շարժումն ամբողջապես վերցրած չի կարող ապրել սուսկ հիշողություններով նրան հարկավոր ե հստակ նպատակ (ծրագիր), հաստատուն գիծ (տակտիկա)։ Այդպիսին են, որինակ, լասաւալը Գերմանիայում, Բլանկին Ֆրանսիայում։ Կան նաև այլ տեսակի առաջնորդներ, խաղաղ ժամանակների առաջնորդներ, թեորիայում ուժեղ, բայց կազմակերպման և գործնական աշխատանքի խնդիրներում թույլ։ Այդպիսի առաջնորդները ժողովրդականություն ունեն պրոլե-

տարիատի միայն վերնախավում, և այն ել միայն մի վորոշ ժամանակ։ հեղափոխական դարաշրջանը վրա հասնելիս, յերբ առաջնորդներից հեղափոխական-գործնական լոգունգներ են պահանջվում՝ տեսաբանները հեռանում են ասպարեզից, զիջելով իրենց տեղը նոր մարդկանց։ Այդպիսին են, որինակի համար, Պլեխանովը Ռուսաստանում, Կառլցին Գերմանիայում։

Վորպեսզի պրոլետարական հեղափոխության և պրոլետարական կուսակցության առաջնորդը դիմանա իր գիրքերում, անհրաժեշտ ե, վոր նա իր մեջ թեորետիկական կարողությունը զուգորդի պրոլետարական շարժման պրակտիկ-կազմակերպչական փորձի հետ։ Պ. Ակսելրոդը, յերբ մարքսիստ եր, Լենինի մասին գրում եր, թե նա «իր մեջ լավ պրակտիկի փորձը հաջողությամբ միացնում է թեորետիկ կրթության և լայն քաղաքական հորիզոնի հետ» Պ. Ակսելրոդի առաջարանը Լենինի «Խուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները» բրոցուրին։ Թե ինչ կասեր հիմա ընկ. Լենինի մասին «կուլտուրական» կապիտալիզմի իդեոլոգ Պ. Ակսելրոդը, գժվար չե զիսի ընկնել։ Բայց մեզ համար, վոր Լենինին մոտիկից ճանաչում ենք և կարող ենք որյեկտիվորեն նայել խնդրին, անկասկած ե, վոր այդ հին հատությունն ամբողջապես պահպանված ե Լենինի կությունն ամբողջապես պահպանված ե լենինի մեջ։ Ի միջի այլոց, այդտեղ պետք ե փնտոել այն փաստի բացատրությունը, վոր Լենինը, և հենց նա յե ներկայումս աշխարհի ամենաուժեղ և ամենակոփված պրոլետարական կուսակցության առաջնորդը։

ԼԵՆԻՆԻ ՄԸՍԻՆ

Առաջ՝ արտասանած կրեմլյան կուրսանուների յերեկույթում
(1924 թ. նունվարի 28)

Ընկերներ: Ինձ ասացին, վոր այստեղ ձեզ մոտ Լենինի մասին հուշերի յերեկո յե կազմակերպված, իսկ յես հրամիրված եմ յերեկութիւն իրրև զեկուցողներից մեկը։ Յես յենթադրում եմ, վոր անհրաժեշտ չի կապակցված զեկուցում տալ Լենինի գործունեյության մասին։ Յես կարծում եմ, վոր ավելի լավ կիներ սահմանափակվեր, հաղորդելով մի շարք փաստեր, վորոնք նշեյին Լենինի առանձնահատկությունները՝ վորպես մարդու և վորպես գործչի։ Եյս փաստերի միջև, թերևս, ներքին կապ չի լինի, բայց այդ չի կարող վճռական նշանակություն ունենալ Լենինի մասին ընդհանուր պատկերացում ստանալու համար։ Համենայն զեպս յես հնարավորություն չունեմ, տվյալ զեպքում, ձեզ ավելի բան տալ, քան խոստացա վերևում։

Լ. Ռ. Ա. Ա. Ր. Ծ. Ի. Վ.

Առաջին անգամ Լենինի հետ յես ծանոթացա 1903 թ.։ Ճիշտ ե, այդ ծանոթությունն անձնական չեր, այլ հեռակա, զրագրության կարգով։ Բայց նա իմ մեջ թողել ե անջինջ տպավորություն, վորը յես չեմ մոռացել կուսակցության մեջ կատարած իմ աշխատանքի ամբողջ ընթացքում։ Յես այն ժամանակ

Սիրիրում աքսորական եյի։ 90-ական թվականների վերջերից սկսած և հատկապես 1901 թվից, «Խոկրաց»-ի հրատարակությունից հետո, Լենինի հեղափոխական գործունեյության հետ ունեցած ծանոթությունս ինձ բերել եր այն յեզրակացությանը, վոր Լենինը մի սովորական մարդ չի։ Այն ժամանակ նա իմ աշքին սոսկ կուսակցության զեկավար չեր, նա նրա փաստական ստեղծողն եր, վորովհետեւ միայն նա յեր, վոր հասկանում եր մեր կուսակցության ներքին եյությունը և անհետաձգելի կարիքները։ Յերբ յես նրան համեմատում եյի մեր կուսակցության մյուս զեկավարների հետ, ինձ շարունակ թվում եր, վոր Լենինի զինակիցները — Պետսանովը, Մարտովը, Ակսելբորդը և մյուսները — Լենինից ամբողջ պիսով ցածր են կանգնած, վոր Լենինը նրանց համեմատությամբ սոսկ զեկավարներից մեկը չե, այլ բարձրագույն տիպի զեկավար ե, լեռան արծիվ վոր զգիտե ինչ ե վախը պայքարի ընթացքում և կուսակցությունը խիզախորեն առաջ ե վարում ուռական հեղափոխական շարժման անծանօթ ուղիներով։ Եյդ տպավորությունն այնքան խորը մեխովեց իմ սրտում, վոր յես անհրաժեշտություն զգացի նրա մասին գրել իմ մի մոտիկ ընկերոջը, վոր այն ժամանակ եմիզրացիայում եր գրտնը վում, նրա կարծիքը պահանջելով։ Միքանի ժամանակ անց, յերբ յես Սիրիրում աքսորական եյի, — այդ 1903 թ. վերջերքին եր, — յես ստացա իմ ընկերոջ խանդակառ պատասխանը և մի պարզ, բայց խորապես բովանդակալված նամակ Լենինից, վորին, ինչպես պարզվեց, ընկերս ծանոթացրել եր իմ նամակի հետ։ Լենինի նամակը համեմպարար յերկար չեր,

բայց նա տալիս եր մեր կուսակցության պրակտիկայի խիզախ, անվախ քննադատությունը և մոտակա շրջանի համար կուսակցության աշխատանքի ամբողջ պլանի գարմանալի հստակ ու սեղմ շարադրումը: Միայն Լենինը կարող եր ամենախճճված բաների մասին գրել այդքան պարզ ու հստակ, սեղմ ու համարձակ, յերբ յուրաքանչյուր նախադասությունը վոչ թե խոսում, այլ պայմանը եւ: Եյս պարզ և համարձակ նամակն ել ավելի ամրապնդեց իմ այն կարծիքը, թե Լենինը մեր կուսակցության լեռան արծիվն եւ Զեմ կարող ներել ինձ, վոր Լենինի այդ նամակը, ինչպես շատ ուրիշ նամակներ, հին ընդհատակյա աշխատողի սովորության համաձայն կրակին հանձնեցի:

Այդ ժամանակվանից սկսվեց իմ ծանոթությունը Լենինի հետ:

ՀԱՄԵՍՏՈՒԹՅԱՆ

Լենինին առաջին անգամ յես հանդիպեցի 1905 թ. դեկտեմբերին Տամմերֆորսում (Ֆինլանդիայում)՝ բոլշևիկների կոնֆերանսում: Յես հույս ունեի տեսնել մեր կուսակցության լեռան արծվին, մեծ մարդուն, մեծ վոչ միայն քաղաքականապես, այլև, յեթե կուզեք, նաև ֆիզիկապես, վորովհետև Լենինն իմ յերևակայության մեջ զծագրվում եր իբրև վայերշակազմ ու պարթե մի հսկա: Ինչ մեծ եր իմ հիասթափությունը, յերբ յես տեսա ամենասովորական մի մարդու, միջակ հասակից ցածր, վոր վոչնչով բառիս բուն նշանակությամբ վոչնչով չեր տարրերվում սովորական մահկանացուներից... Հնգունված ե, վոր «մեծ մարդ» սովորաբար պետք

ե ժողովից ուշանա, վորպեսզի ժողովականները շնչակտուր սպասեն նրա յերեալուն ու մեծ մարդու յերեվալուց առաջ ժողովականները նախազգուշացնում են — «սուս... լոեցեք... գալիս ե»: Այդ ծիսակատարությունն ինձ ավելորդ չեր թվում, վորովհետև նա տպավորություն ե թողնում, հարգանք ե ներշնչում: Ինչքան մեծ յեղավ իմ հիասթափությունը, յերբ յես իմացա, վոր Լենինը ժողովի յեր յեկել պատգամավորներից առաջ և մի անկյուն մտած, հասարակ յեղանակով զրուցում ե, ամենասովորական մի զրույց կոնֆերանսի ամենասովորական պատգամավորների հետ: Զեմ թագյնում, վոր այն ժամանակ այդ ինձ թվաց իբրև վորոց անհրաժեշտ կանոնների վորոշ խախտում:

Հետագայում միայն յես հասկացա, վոր Լենինի այդ պարզությունն ու համեստությունը, աննկատ մնալու կամ, համենայն դեպս, աչքի չզարկելու և իր բարձր զիրքը չընդգծելու այդ ձգտումը, — այդ գիծը Լենինի ամենաուժեղ կողմերից մեկն ե, իբրև նոր մասսաների, մարդկության ամենախորունկ «ներքնախավերի» պարզ ու սովորական մասսաների նոր առաջնորդի:

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՓ

Ուշագրավ ե յին այդ կոնֆերանսում Լենինի արտասանած յեկու ճառերը՝ ընթացիկ մոմենտի և ազգարային հարցի մասին: Դժբախտաբար, զրանք չեն մնացել Դրանք վոգմորված ճառեր եյին, վոր բուռն խանդակառությամբ համակեցին ամբողջ կոնֆերանսը: Համոզմունքի անսպոր ուժ, փաստարկման պարզություն և հստակություն, կարճ և բոլորին հաս-

կանալի նախադասություններ, պաճուճանքի բացակայություն, տպավորություն առաջացնելու միտում ունեցող գլխապտույտ ժեստերի և եֆեկտավոր փրազաների բացակայություն.—այս բոլորը նպաստավոր կերպով տարբերում եյին Լենինի ճառը սովորական «պարլամենտական» հոետորների ճառերից:

Բայց այն ժամանակ Լենինի ճառերի այդ կողմը չեր, վոր կախարդեց ինձ: Ինձ կախարդեց տրամաբանության այն անպարտելի ուժը Լենինի ճառերում, վորը փոքր ինչ չոր, բայց դրա փոխարեն հիմնովին տիրապետում ե լսարանին, հետզհետե ելեկտրականացնում ե նրան, ապա գերում ե նրան, ինչպես ասում են, առանց մնացորդի: Հիշում եմ, թե ինչպես այն ժամանակ պատգմավորներից շատերն ասում եյին. «Տրամաբանությունը Լենինի ճառերում, դա մի տեսակ ամենակարող շոշափուկներ են, վորոնք աքցանի պես քեզ բռնում են բոլոր կողմերից և վորոնցից դուրս պրծնել անկարող ես. կամ հանձնըմիր, կամ վորոշիր լիակատար կերպով խորտակվել»:

Յես կարծում եմ, վոր Լենինի ճառերի այդ առանձնահատկությունը նրա հոետորական արվեստի ամենաուժեղ կողմն են:

ԱՌԱՆՑ ՀԵԿԵԿԱՆՔԻ

Յերկրորդ անգամ յես Լենինին հանդիպեցի 1906 թ. մեր կուսակցության Ստոկհոլմյան համագումարում: Հայտնի յէ, վոր այս համագումարում բոլշևիկները փոքրամասնություն կազմեցին, պարտություն կրեցին: Յես այն ժամանակ Լենինին առաջին անգամն եյի տեսնում պարտվողի դերում: Նա իսկի նման

չեր այն առաջնորդներին, վորոնք հեկեկում և վհատվում են պարտությունից հետո: Ընդհակառակը, պարտությունը Լենինին դարձրեց յեռանդի խտացում, վոր վոգերում եր իր կողմնակիցներին նոր մարտերի, ապագա հաղթանակի համար: Յես խոսում եմ Լենինի պարտության մասին: Բայց ի՞նչպիսի պարտություն եր այդ: Պետք եր տեսնել Լենինի հապարտություն կառակորդներին, Ստոկհոլմյան համագումարում հաղթողներին—Պիեսանովին, Ակսելլոպին, Մարտովին և մյուսներին. նրանք շատ քիչ եյին նման խսկական հաղթողների, վորովհետև Լենինը, մենշևիզմի իր անխնացատությամբ, նրանց վրա, ինչպես առանց քննազատությամբ, նրանց վրա, ինչպես սում են, վոր չ տեղ չթողեց: Հիշում եմ, թե ինչպես մենք, բոլշևիկ պատգամավորներս, միտեղ խմբված նայում եյինք Լենինին, նրանից խորհուրդ հարցնում: Միքանի պատգամավորների ճառերում յերեսում եր հոգնածություն, վհատություն: Հիշում եմ, թե ինչպես Լենինը, պատասխանելով այդ ճառերին, ատամանը միջից կծու մոլտաց. «Միք հեկեկա, ընկերներ, մենք անպայման կազմենք, վորովհետև մենք իրավացի յենք»: Ատելություն հեկեկացող ինտելիգենտացի հանդեպ, սեփական ուժերին հավատալը, հաղթանակի հավատը,—ահա թե ինչի մասին եր այն ժամանակ մեզ հետ խոսում Լենինը: Զգացվում եր, ժամանակ մեզ հանդիպեցի պարտությունը ժամանակավոր ե, վոր բոլշևիկների պարտությունը ժամանակավայում: Վոր բոլշևիկները կհաղթեն մոտիկ ապագայում»—դա Լենինի պարտության դեպքում»—դա Լենինի գործունեյության այն առանձնահատկությունն է, վորը նրան ոգնեց իր շուրջը համախմբելու մինչև, վորը նրան ոգնեց իր շուրջը համախմբելու մինչև վերջը նվիրված և սեփական ուժերին հավատացող մի բանակ:

Համագումարում, 1907թ. Լոնդոնում,
բոլցիկները հաղթող հանդիսացան: Յես այն ժա-
մանակ առաջին անգամն եյի Լենինին տեսնում հաղ-
թողի դերում: Սովորաբար հաղթանակը վորոշ առաջ-
նորդների զլուխը պատեցնում ե, նրանց դարձնում
ե գոռող և ամբարտավաճան: Այդպիսի դեպքերում շատ
հաճախ սկսում են հաղթանակը տոնել, դափնիների
վրա հանգստանալ: Բայց Լենինն ամենակին նման չեր
այդպիսի առաջնորդների: Ընդհակառակը, հենց հաղ-
թանակից հետո յեր նա առանձնապես աշալուրջ ու
զգուշափոր դառնում: Դիշում եմ, թե ինչպես Լենինն
այն ժամանակ համառորեն ներչնչում եր պատ-
գամավորներին. «առաջին գործը՝ հաղթանակով՝ չը-
տարվել և չամբարտավաճանալն ե. յերկրորդ գործը՝
ամրացնել ձեռք բերված հաղթանակը, յերրորդ՝ մինչև
վերջը ջախջախել հակառակորդին, վորովհետեւ
նա միայն ջարդված ե, բայց գեռ ամենակին մինչև
վերջը չի ջախջախված»: Նա կծու ծաղրում եր այն
պատգամավորներին, վորոնք թեթևամտորեն հավա-
տացնում եյին, թե «այլևս մենշևիկների հաշիվը վեր-
ջացած ե»: Նրա համար դժվար չեր ապացուցել, վոր
մենշևիկները դեռևս արմատներ ունեն բանվորա-
կան շարժման մեջ, վոր նրանց գեմ հարկավոր ե
պայքարել հմտորեն, ամեն կերպ խուսափելով սե-
փական ուժերը գերազահատելուց և, մանավանդ,
հակառակորդի ուժերը թերազնահատելուց:

«Զամբարտավանանալ հաղթանակով»—դա Լենինի
ընավորության հենց այն առանձնահատկությունն
ե, վորը նրան ովնեց լրջորեն կշռել հակառակորդի

ուժերը և կուսակցությունն ապահովագրել հնարա-
վոր անակնալներից:

ԱԿԳԲՈՒԽՆՔԱՅՆՈՒԹՅՈՒՆ

կուսակցության առաջնորդները չեն կարող չգնահատել իրենց կուսակցության մեծամասնության կարծիքը: Մեծամասնությունը—զա այն ուժն է, վորը չի կարող հաշվի չառնել առաջնորդը: Լենինն այդ նույնքան լավ եր հասկանում, վորքան կուսակցության ամեն մի այլ ղեկավար: Բայց Լենինը յերբեք մեծամասնության գերին չեր դառնում, մասնավանդ, յերբ այդ մեծամասնությունն իր վոտքերի տակ սկզբունքային հիմք չուներ: Դեպքեր են յեղել մեր կուսակցության պատմության մեջ, յերբ մեծամասնության կարծիքը կամ կուսակցության ըոպեյական շահերն ընդհարվել են պրոլետարիատի արմատական շահերի հետ: Այդպիսի դեպքերում Լենինն առանց յերկար ու բարակ մտածելու, կանգնում եր սկզբունքայնության կողմն՝ ընդդեմ կուսակցության մեծամասնության: Ավելին, նա այդպիսի դեպքերում չեր փախենում, բառիս բուն նշանակությամբ, մեն-մենակ դուրս գալ բոլորի գեմ, հաշվի առնելով այն,—ինչպես հաճախ ասում եր նա, —վոր «սկզբունքային քաղաքականությունը միակ ճիշտ քաղաքականությունն ե»:

Այդ տեսակետից առանձնապես բնորոշ են հետևյալ յերկու փաստերը:

Առաջին փաս: 1909—1911 թ. թ. Մշամը, յորը
կուսակցությունը, հակահեղափոխության կողմից
ջախջախված, լիակատար քայլայում եր ապրում:
Դա կուսակցությանը հավատ չքհծայելու արջանն եր,

մի շրջան, յերբ բոլորը փախչում եյին կուսակցությունից, վոչ միայն ինտելիգենտները, այլև մասսամբ բանվորները, ընդհատակյա գործունելությունը ժխտելու շրջանը, լիկվիդատորության և փլուզման շրջանը։ Վոչ միայն մենշևիկները, այլև բոլշևիկներն այն ժամանակ մի ամբողջ շարք ֆրակցիաներ և հոսանքներ եյին կազմում, վորոնք մեծ մասսամբ կտրված եյին բանվորական շարժումից։ Հայտնի յե, վոր հենց այդ շրջանում ծագեց ընդհատակյա գործունելության լիակատար վերացման և բանվորներին լեզար, լիբերալ ստոլիպինյան կուսակցության մեջ կազմակերպելու իդեան։ Լենինն այն ժամանակ միակն եր, վոր չենթարկվեց ընդհանուր վարակին և բարձր պահեց կուսակցության դրոշը, հավաքելով կուսակցության բաժան-բաժան ու ջախ-ջախված ուժերին զարմանալի համբերությամբ և չտեսնված համառությամբ, կովելով բոլոր և ամենատեսակ հակակուսակցական հոսանքների դեմ-բանվորական շարժման ներսում, պաշտպանելով կուսակցականությունն անհախընթաց արիությամբ և չտեսնված հաստատակամությամբ։

Հայտնի յե, վոր կուսակցականության վերաբերյալ այս վեճում լենինը հետո հաղթական դուրս յեկավ։ Յերկրորդ փաստ 1914—1917 թ.թ. շրջանը, իմպե-րիալիստական պատերազմի յեռուն շրջանը, յերբ բոլոր կամ գրեթե բոլոր սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցությունները, յենթարկվելով ընդհանուր հայրենասիրական ուժարին, ծառայա-դրվեցին հայրենասիրական իմպերիալիզմին։ Այդ մի շրջան եր, յերբ Յերկրորդ ինտերնացիոնալն իր դրոշակները խոնարհեց կտրվածայտաշահայերք շումինիստական

ալիքի առջև չեյին դիմանում անգամ այնպիսի մար-դիկ, ինչպիսիք են Պլեխանովը, Կառլեցին, Գեղը և մյուսները։ Լենինն այն ժամանակ միակը կամ գրե-թե միակն եր, վոր վճռական պայքար սկսեց ընդ-դեմ սոցիալ-շումինիզմի և սոցիալ-պացիֆիզմի, մեր-կացը գեղերի ու Կառլեցիների դավաճանությու-նը և խարանեց միջակ խելքի տեր «հեղափոխական-ների» կիսատ-պուտությունը։ Լենինը հասկանում եր, վոր իր հետեւ աննշան փոքրամասնություն կա, բայց այդ նրա համար նշանակություն չուներ, վո-րովհետև նա զիտեր, վոր ապագա ունեցող միակ ճշգրիտ քաղաքականությունը հետևողական ինտեր-նացիոնալիզմի քաղաքականությունն ե, վորովհետև նա զիտեր, վոր սկզբունքային քաղաքականությու-նը միակ ճշգրիտ քաղաքականությունն ե։

Հայտնի յե, վոր նոր ինտերնացիոնալի վերաբե-րյալ այս վեճում ել լենինը հաղթական դուրս յեկավ։

«Սկզբունքային քաղաքականությունը միակ ճշգրիտ քաղաքականությունն ե»—զա հենց այն ճշգրիտ քաղաքականությունն ե, վորի ողնությամբ լենինը գրոհով վերց-ֆորմուլան ե, վորի ողնությամբ լենինը գրոհով վերց-գրեց նոր «անմատչելի» դիրքեր, հեղափոխական ըարքսիզմի կողմը նվաճելով պրոլետարիատի լավագույն տարրերին։

ՀԱՎԱՏՔ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

Կուսակցությունների տեսաբաններն ու առաջ-նորդները, վորոնք զիտեն ժողովուրդների պատ-մությունը, ուսումնասիրել են հեղափոխություն-ների պատմությունն սկզբից մինչև վերջը, յերբեմն վարակվում են մի անվայել հիվանդությամբ։ Այդ հիվանդությունը կոչվում ե մասսաներից վախենալ,

մասսաների ստեղծագործ ընդունակություններին չհավատալ: Այս հողի վրա յերբեմն առաջանում է առաջնորդների ինչ-փոր արիստոկրատիզմ մասսաների նկատմամբ, մասսաների, վորոնք հեղափոխությունների պատմության գործում փորձված չեն, բայց կոչված են ջախջախել հինը և կառուցել նորը: Վախ, թե տարերքը կարող ե ալեկոծվել թե մասսաները կարող են «շատ ավելի բաներ փշուել», դայակի դեր խաղալու ցանկություն, դայակ, վոր աշխատում ե մասսաներին սովորեցնել գրքերի վրա, բայց չի ցանկանում սովորել մասսաներից, — այդպիսի յերիստոկրատիզմի այս տեսակի հիմունքը:

Լենինը լիակատար հակագրություն եր այդպիսի առաջնորդների նկատմամբ: Յես չեմ ճանաչում մի այլ հեղափոխականի, վորն այդքան խորն հավատ ընծայեր պրոլետարիատի ստեղծագործ ուժերին և նրա դասակարգային բնազդի հեղափոխական նպատակահարմարությանը, վորքան Լենինը: Յես չեմ ճանաչում մի այլ հեղափոխականի, վորը կարողանար այնքան անխնա մտրակել «հեղափոխության քառոսի» և «մասսաների ինքնիշխան գործողությունների վակխանափայի» ինքնագոհ քննադատներին, վորքան Լենինը: Հիշում եմ, թե ինչպես մի զրույցի ժամանակ, ի պատասխան ընկերներից մեկի այն դիտությանը, թե «հեղափոխությունից հետո պետք ե նորմալ կարգ սահմանվի», Լենինը կծու հեղնությամբ նկատեց. «Վայ այն մարդկանց, վորոնք ցանկանում են հեղափոխական լինել, բայց մոռանում են, վոր պատմության մեջ ամենից նորմալ կարգը հեղափոխության կարգն ե»:

Այդտեղից եր բղխում Լենինի արհամարհական

վերաբերմունքը նրանց բոլորի հանդեպ, վորոնք աշխատում եյին բարձրից նայել մասսաներին և գրքերով սովորեցնել նրանց: Այդտեղից եր բղխում Լենինի անդուկ քարոզը—սովորել մասսաներից, իմաստավորել նրանց գործողությունները, ուշի-ուշով ուսումնասիրել մասսաների պայքարի գործնական փորձը:

Հավատք մասսաների ստեղծագործ ուժերին—դա Լենինի գործունեյության այն առանձնահատկությունն ե, վորը նրան հնարավորություն տվեց իմաստավորել տարերքը և նրա շարժումն ուղղել դեպի պրոլետարական հեղափոխության հունը:

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁԱՐ

Լենինը ծնված եր հեղափոխության համար: Նա իրոք հեղափոխական պայցիունների հանճարն եր և հեղափոխական դեկավարման մեծագույն վարպետը: Նա յերբեք իրեն այնքան ուրախ և ազատ չեր զգում, վորքան հեղափոխական ցնցումների դարաշրջանում: Սրանով յես ամենկին չեմ ուզում ասած լինել, վոր Լենինը միակերպ խրախուսում եր ամեն մի հեղափոխական ցնցում, կամ վոր շարունակ և ամեն պայմաններում կողմնակից եր հեղափոխական պայցիունների: Ամենկին: Սրանով յես ուզում եմ ասած լինել միայն, վոր յերբեք Լենինի հանճարեղ սրամտությունը՝ չեր զբանորվում այնքան լըլիվ և այնքան հստակ, վորքան հեղափոխական պայցիունների ժամանակ: Հեղափոխական շրջադարձերի որերին նա բառիս բուն նշանակությամբ փթթում եր, դառնում եր պայծառատես, կանխագուշակում եր դասակարգերի շարժումը և հեղափոխության հավանա-

կան զիգզագները, տեսնելով այդպիսին ասես թե
ափի մեջ։ Իզուր չե, վոր մեր կուսակցական շրր-
ջանակներում ասում են, թե «Իսիծը գիտե լողալ
հեղափոխության ալիքներում, ինչպես ձուկը ջրում»։

Այստեղից՝ Լենինի տակտիկական լոգունգների
«գարմանալի» հստակությունը և հեղափոխական դիտա-
վորությունների «գլխապույտ» խիզախությունը։

Առանձնապես հիշում եմ յերկու քննորոշ փաստ, փո-
րոնք նշում են Լենինի այդ առանձնահատկությունը։

Առաջին փաստ։ Հոկտեմբերյան հեղաշրջմանը նա-
խորդող շրջանը, յերբ միլիոնավոր բանվորներ, գյու-
ղացիներ և զինվորներ, վորոնց հալածում եր ճգնա-
ժամը թիկունքում և ճակատում, խաղաղություն և
ազատություն եյին պահանջում։ յերբ գեներալները և
բոլժուազիան ուղամական դիկտատուրա եյին պատ-
րաստում «մինչև վերջը պատերազմելու» համար։ յերբ
փող այսպես կոչված «հասարակական կարծիքը», բո-
լոր այսպես կոչված «սոցիալիստական կուսակցու-
թյունները» բոլշևիկների դեմ եյին կանգնած, նրանց
հետ փարփում եյին իրրե «գերմանական լրտեսների»։
յերբ Կերենսկին ճգնում եր ընդհատակ քշել, —և մա-
սամբ կարողացավ քշել բոլշևիկների կուսակցությանը։
յերբ ավստրո-գերմանական կոսալիցիայի դեռևս հզոր
ու կարգապահ բանակները կանգնած եյին մեր հոգնած
ու քայլայված բանակների դեմ, իսկ արևմտա-յեկ-
րոպական «սոցիալիստները» բարեհաջող բլոկի մեջ
եյին իրենց կառավարությունների հետ «պատերազ-
մը մինչև լիակատար հաղթանակը տանելու»...

Ի՞նչ եր նշանակում ապստամբություն բարձ-
րացնել այդպիսի միջոցին։ Այդ պայմաններում
ապստամբություն բարձրացնել նշանակում եր

ամեն ինչ վերջնականորեն դնել։ Բայց Լենինը չեր
վախենում ուսիկ անել, վորովհետև նա գիտեր, տես-
նում եր իր պայծառատես հայացքով, վոր ապստամ-
բությունն անխուսափելի յե, վոր ապստամբությու-
նը կհաղթի, վոր ապստամբությունը—Ռուսաստա-
նում իմպերալիստական պատերազմի վախճան
կպատրաստի, վոր ապստամբությունը Ռուսաստա-
նում կթափահարի Արևմուտքի տանջված մասսա-
ներին, վոր ապստամբությունը Ռուսաստանում
իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական
պատերազմի կվերածի, վոր ապստամբությունը
խորհուրդների հանրապետություն կտա, վոր խոր-
հուրդների հանրապետությունն իրրե պատնեշ-
կծառայի ամբողջ աշխարհի հեղափոխական շարժ-
ման համար։

Հայտնի յե, վոր Լենինի այս հեղափոխական
կանխատեսությունը հետագայում իրագործվեց
չտեսնված ճշգրտությամբ։

Յերկրորդ փաստ։ Հոկտեմբերյան հեղափոխությու-
նից հետո, առաջին որերը, յերբ ժողովրդական կո-
միսարների Խորհուրդը փորձում եր ստիպել, վոր խոռ-
վարար գեներալը, գլխավոր հրամանատար Դուլսո-
նինը դադարեցնի ուղամական գործողությունները
և գերմանացիների հետ հաշտության բանակցու-
թյուններ սկսի։ Հիշում եմ, թե ինչպես Լենինը, Կրի-
լենկոն (ապագա գլխավոր հրամանատարը) և յես
Պիտերում գնացինք գլխավոր շտաբը, վորպեսզի հե-
ռազրուկ բանակցենք Դուլսոնինի հետ։ Ռոպեն ահալի
յեր։ Դուլսոնինը և Ստավկան կատեզորիկ կերպով
համաժամանակ կատարելու ժողկոմխորհի հրամանը։
հրաժարվեցին կատարելու ժողկոմխորհի հրամանը։
Բանակի հրամանատարական կազմն ամբողջապես

ԲԱՎԱՆԴԱԿԱՒԹՅՈՒՆ

Եջ

ԼԵՆԻՆԸ ՎՈՐՈՒՍ ՌԿԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ

1. Լենինը վորպես Ռուսական կոմունիստական կուսակցության կազմակերպիչ	5
2. Լենինը վորպես Ռուսական կոմունիստական կուսակցության առաջնորդ	10

ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ

Լեռան արծիվը	16
Համեստություն	18
Տրամաբանության ուժ	19
Առանց հեկեկանքի	20
Առանց ամբարտավանության	22
Սկզբունքայնություն	23
Հավատք մասսաների հանդեպ	25
Հեղափոխության հանճար	27



«Ազգային գրադարան



NL0181570

ԳԻՒՐ 25 ԿՈՊ.



И. СТАЛИН
О ЛЕНИНЕ

Партиздан 1934 Էրևան